

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

ՈՒԽՏԱՏԵՂԻ ԿՐԾԱՆԻՍՈՒ

ԽՆԴԱԳՐՈՒՄԻ ԵՄԵԱՆ ԱՐԿԱՐԱԿ ԽՈՒՄԱԳՐՈՅ.

Ի բազում ամաց հետէ շինութիւն նորոց հիմնարկեալ Եկեղեցւոյն Կրճանխու սուրբ Աստուածածին ուխտատեղոց եղևոյ մերձ Տփխիսայ՝ թէ և հասեալ էր որմուկքն մինչև ցփերին տեղիս կամարացն, այլ ի չզոյէ գումարաց և բաւականին արդեանց՝ առաստաղն նորին մնացեալ էր տակաւին անկատար, և ծածկեալ փայտեայ ծածկութիւ և հողով. բստորում ի ներքուստ և արտաքուստ էր ի կարի անշուք գրութեան. սակայն յանցեալ ամի օգնութեամբ աստուածախրաց հասուցաւ յաւարտ շինութիւն առաստաղաց եկեղեցւոյն հոյակապ և սաղաչէն յօրինուածովք և կղմարեայ ծածկութիւ. ընդ սմին շրջապատեցաւ ի վերուստ որմոցն երկողունց ժեշտեայ կիսախողովակաւ վասն անձրևոյ ջրոյն. իսկ ե ներքուստ տուաւ լնսուլ գաջիւ գործունս սեղանոյն, և նորոց շինեցաւ գեղեցկաշարմար խաչկալ բեմին. յորում միջոցի բաց յարդեանց եկեղեցւոյն և մասնաւոր տրոց զանազան անձանց բարեպաշտից ի գործ եկելոյ ի վերայ շինութեանց նորին, հետեւեալ ազգասէր անձինք արարեալ են զնշանաւոր նուիրատուութիւնս յօգուտ շինութեան եկեղեցւոյն. ա) Պաշտօնաթող պարուչիկ Պայծառափայլ Կնեազ Յակոբն Ալէքսեան Խօջամիսասեանց ընծայեաց զբասն և հինգ հազար կղմիւնար արժողութեամբ հինգ հարիւր բուրջոյ, վճարելով յիւրմէ սեփականութենէ և զվարձս կրելոյ զայնոսիկ մինչև ցուխատեղին, բաց յայնցանէ ի վերայ շինութեան ժեշտեայ կիսախողովակի արարեալ է յիսուն բուրջի ծախս. բ) Տոհմական Պատուաւոր քաղաքացի Յովհաննէս Տէր Աստուածաբանն Տէր Աստուածատրեանց ի վերայ շինութեան խաչկալի բեմի եկեղեցւոյն և լնեկոյ գաջիւ սեղանոյ նորին արար զծախս հարիւր վաթսուն բուրջիս արծաթոյ, և դ) Տփխիսայ քաղաքացի Միքայէլն Աւետիքեան Ծատուրեանց ընծայեաց ի պէտս ծածկութի փայտեայ և սրածայր փղբրիկ գմբէթի եկեղեցւոյն ժեշտ յիսուն բուրջի արծաթոյ, Զայսմ աստուածահաճոյ նուիրատուութենէ յիշեալ Բարեպաշտօն անձանց հաղորդեալ Խմբագրութեանդ Արարող ամսագրոյ՝ խոնարհարար խնդրեմ միջոցաւ ամսագրոյդ հրատարակել ի լուր մերազնեկից ի խրախոյս նոցին առատաձեռն նուիրատուաց, և ի բարի օրինակ պողոյ:

Արժանեխոս Ս. Աշխատիւն Խոյսապետեղոյ

Յովհաննէս Վահանայ Ս. Ե իշխանեանց

Ի 11 - 2 Ապրիլի 1871 - 4  
Ի Տփիլիս

ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԻՈՐ ԳՊՐՈՅ ՀԱՅՈՑ  
ՂԱՐԱՐԱՂՈՒ.

ԽՆԴԱԳՐՈՒՄԻ ԵՄԵԱՆ ԱՐԿԱՐԱԿ ԽՈՒՄԱԳՐՈՅ.

Այս երևելի Գպրոցը՝ մեր Ազգային միւս զբարոցաց օրինակի պէս՝ իւր սկզբնաւորութենէն ի վեր զանազան շրջաններ ունեցել է: Մենք այստեղ անցելոց վերայ խօսելու միտք չունիմք, վասն զի ազգին մեծագոյն ողջամիտ մասին քաջայայտ է. միայն պարտ կհամարեմք ներկայիս վերայ մէկ քանի տեղեկութիւններ հաղորդել Ձեզ:

Արդէն յայտնի է որ Ա. Ե. համալսարանի Զարեհ Տէր Գեորգ քաջ գիտելով թէ՛ մի ազգի բարոյական և նիւթական երջանկութիւնն կրթիի Գպրոցներեց, վասնորոյ իւր Հայրաքինում հոգատարութեամբ, իմաստուն և նախատես խորհուրդներով և բարեհամբոյր խրախուսանօք իւր ամեն ծայրագոյն զբաղմունքներեց աւելի այս վերագոյն գործառնութեան, այն է Գպրոցաց բարեկարգութեան հաստատութեան ուշադրութիւն գործրել է, ինչպէս որ ազգային լրագիրք անդադար մեզ կճանուցանեն: Ասան զի մէկ կողմից Գերագահ Մայր Աթոռոյ ուսումնարանը շինելու, միւս կողմից ամեն Հայաբնակ քաղաքաց Գպրոցները պայծառացնելու և ծաղկեցնելու տքնում է, որոնք իւր Ազգասիրական ջանից անեղծ և կենդանի յիշատակներ կարող են լինել:

Այս ազգաշահ ինամամութիւնը վայելից նաև Ազգային Հոգևոր Գպրոցն Հայոց Ասարաբազու, որնոր նոյն Աստուածարեալ Հայրապետի քաջալնրութեամբ և տեղոյս Առաջնորդ Սրբազան Սարգիս Երքեպետի սիրտի արթուն և բազմախորձ գործունէութեամբ և ազգասիրական ջանքով մի ուրախատիթ և զրկթէ իւր առաջին շրջաններեց տարբեր և յառաջադէմ շրջան և ուղղութիւն ստացաւ:

Այս բարեբաստութիւնը նախընթաց 1870 թուականի Սեպտեմբեր տանից սկսաւ վայելել. Գպրոցական հորիզոնի վերայ կարճես մի կենսատու աբև ծագեցաւ շնորհիւ նորուն Ա. Ե. համալսարանութեան. որով այս բարոյական պարտիզի բանական բոյսերը սկսան վերընծիւղել, աճել և զարգանալ, մէկ խօսքով մի Հայ վարժարանի սեպհական յատկութիւնները սկսան սորա մէջ երևել, վասն զի աշակերտներ սուղ միջոցի մէջ այլ և այլ ուսմանց ևս առաւել Հայկարանութեան մէջ սքանչելի հրակայաքայլ ընթացքով առաջ գնացին:

Գպրոցը առ այժմ կը բաղկանայ երեք դասարանից և մէկ նախակրթարանից, որոց մէջ կուսանին այժմ երկու հարիւրի չափ աշակերտք, որոց ուսանելի առարկայքն են՝

- Սրօն.
- Հայերէն.
- Ռուսերէն.

Գաղղիներէն.

Պատմութիւն Հայոց.

Աշխարհագրութիւն Հայաստանի.

Թուարանութիւն.

Ընդհանուր Աշխարհագրութիւն.

Ընդհանուր Պատմութիւն.

Վայելչագրութիւն.

Երգեցողութիւն.

Այս առարկայից համար իւրաքանչիւր ամսին ըստ օրինակի բարեկարգ Գպրոցաց՝ վարժապետաց համահաւան վկայութեամբ, տեսչին կողմանէ աշակերտաց, ըստ իւրաքանչիւրոց արժանաւորութեանց վկայականներ են տրւում: Իսկ նախակրթարանի մէջ Հայերէն և Ռուսերէն լեզուաց կարգաւորեալ ընթերցանութիւնք և վայելչագրութիւնք և թուարանական նախագիտելիք: Այս ամենայն ուսմանց դասախօսութիւնները ըստ ամենայնի գործնական եղանակաւ կաւանդուին միակերպ դասական գրոց վերայ, հետի ամենայն մեքենական կրկնութիւններէ: Աշակերտաց բարոյականութեան վերայ սաստիկ մտադրութիւն է լինում որպէս զի իրրեւ Հայաստանեայց ուղղափառ սուրբ եկեղեցւոյ հարազատ օրդիք, և իրրեւ ճշմարիտ Հայ դարգանան, հետի ամենայն նորամուտ սփորութիւններէ և օտարոտի ղեղձումըներէ համաձայն ցանկութեան Ա.հ.հա.փա.սա սուրբ Հօր և Առաջնորդի վիճակիս. և այս նպատակին հասնելու համար ոչ ընկերական կենաց և պահանջմանց հակառակ խտտութիւններ և բարբարոսական պատիժներ ի գործ են դրւում, և ոչ էլ մեղկութեան, անբարոյականութեան և թեթեամտութեան առիթ տալու համար փայտայանք և տարապոյման քաղցրութիւն. այս պատճառաւ ամենայն շարաթ օրը բոլոր վարժապետները և վերակացուն, երբեմն ևս հոգաբարձուները իւրաքանչիւր դասատանց մէջ ատեան կազմելով, աշակերտաց վարքը առանձին առանձին քննութեան առնելով, նոցա երբեմն սիրալիր յօրդորներ և երբեմն յանդիմանութիւններ տալով՝ իւրաքանչիւրոց վարուց նշանադիժները կարճանագրեն մատենի մէջ. և այս եղանակը քիչ ժամանակի մէջ մեծ ազդեցութիւն արաւ աշակերտաց ընթացից վերայ:

Սիրելի է նոյնպէս աշակերտաց ամենայն կիրակի օրը ուսումնարանի մէջ վարժապետաց բարոյական և ազգային ատենախօսութիւնները ըսելուց յետոյ ուղիղ կարգապահութեամբ և կրօնական երկիւղածութեամբ եկեղեցի գնալը տեսնելը, մանաւանդ մեծի պահօց միասին հանդերձ վարժապետօք սուրբ Հաղորդութեան դիմելը: Գովեստից արժանի է նաև Գպրոցիս երգեցողութիւնը, վասն զի ամեն կիրակի եկեղեցական բնմն սոցա քաղցրաձայն երգելով և միայնակ պարութեամբ փառաւորում է ըստ օրինակի Տաճկաստանի Հայոց եկեղեցեաց, որոց համար տեղոյս Ազուլեաց եկեղեցւոյ պատուարժան երեսփոխանն պ. Գրիգոր Ա.ուլեանցն՝ սոցա համար միակերպ շապիկ կարել

տուաւ: Գոհութեան արժանի են նաև Գպրոցիս Հոգաբարձուք, որք Ա.հ.հա.փա.սա սուրբ Հօր պաշտելի Առնդակաւ այս պաշտաման մէջ հաստատուելով այս ազնուական և ազգային պարտաւորութիւնը անթերի կատարելու փոյթ են տանում:

Ցանկանում էի ապաքէն, . . . խմբագիրք, Գպրոցիս ներկայ բարերաստ վիճակից լիակատար և մանրամասն տեղեկութիւն տալ Ձեզ, սակայն այս չափս այժմ բաւ համարելով, կ'թողնում ընթերցողաց անձամբ հետաքրքիր լինել իմանալ այցելուներից, և եթէ դէպք բերէ անձամբ տեսնել. վասն զի անուտ է Քրիստոնէական վճիռն "Աչ կարէ քաղաք թագչիլ, որ ի վերայ լերին կայցէ": Բայց ի վերայ այս ամենայնի իրրեւ մասնաւոր ապացոյց ներկայ յառաջադիմութեան Գպրոցիս, աշակերտաց չափածոյ խոյրիքը կուղարկեմ Ձեզ, զորս յօրինեցին, և Քրիստոսի սուրբ Յարութեան օրը ի ներկայութեան Սրբազան Առաջնորդի վիճակիս և բազմախումբ պատուամեծար ժողովրդականաց ի նուէր բարեաց և երախտեաց Ա.հ.հա.փա.սա սուրբ Հօրն կարգային, և շնորհակալութեան արժանի եղան, որոնք իրենց եթեմանեայ աշխատութեամբ Հայկաբանութեան մէջ յառաջադիմելուն պտուղներն են: Աւստի իրենց այս չափածոյ գրուածները խորին խոնարհութեամբ կմատուցանին յուղերձ նորուն Աստուածարեալ Ա.հ.հա.փա.սա.թեան, զորս և կ'անդրեմ այս համառօտ տեղեկութեամբ հանգերձ ի խրախոյս աշակերտաց և յուրախութիւն մերս Հայազգեաց հրատարակել պատուական Ա.հ.հա.փա.սա ամսագրոց միջոցաւ\*):

Սեպտեմբեր 1871 թ. 11 Ապրիլի 1871 թ. 11

(Պոյն գրութեան ի վերջ՝ նորին Գ.երապատուութիւն Սարգիս Ս. Երբեպիսկոպոսն ինքնաձեռագիր յաւելաւ հաճած է հետեւեալ վկայութիւնը ի մասին արդիւնաւէտ զարգացման Գպրոցին Արցախոյ օր ի Շուշի):

Ա.հ.հա.փա.սա Հայրն մեր միշտ ցանկայ և հրամայէ մեզ բարեկարգել զուսումնարանն, և մեր ըստ չափու կարողութեանց մերոց ջանամք ի կատար ածել զսուրբ հրամանս նորա, սակայն հրաման Ա.հ.հա.փա.սա.թեան մերոյ և կարգապարտութիւն մեր անխոնջ ջանիւ և աշխատութեամբ պսակէ պատուելի Մաղաքիա վարժապետն Պլուզեանց և արդարանայ առաձն "գործին գործէ և արհեստաւորն պարծի". ուրեմն թէ ի կողմանէ Ա.հ.հա.փա.սա Հայրապետին և թէ մեր յարգանաց և շնորհակալութեանց արժանի է ըստ ամենայնի:

ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ԱՐԳԻՍ:

(\* ) Մերմ ընդ մերմ տնիմք հրատարակել զայնս ի խրախոյս աշակերտաց: Ծ. Խ. Բ.